



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-13-Ե-9
2017թ.

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությամբ՝

Ա. Սկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բարսեղյանի, Ռ. Բարսեղյանի,
Ա. Դարբինյանի, Գ. Խանդանյանի,
Ա. Խաչատրյանի, Մ. Հարթենյանի,
Գ. Ղազինյանի, Ս. Չիչոյանի,
Ե. Մողմունյանի, Հ. Փանոսյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2017 թվականի հոկտեմբերի 6-ին քաղաք Երևանում՝ դռնփակ նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի թափուր պաշտոնը համալրելու համար վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար ծառայողական առաջխաղացման ցուցակի վարչական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձանց թեկնածությունները և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 144-րդ հոդվածով և 111-րդ հոդվածի 1-ին մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելու համար Արման Ռ-ազմիկի Թովմասյանի թեկնածությանը:

2. Արման Ռ-ազմիկի Թովմասյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի դատավորի պաշտոնում նշանակվելու համար՝ դադարեցնելով նրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորի լիազորությունները:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ